

Միկրոձեռնարկատիրության հատուկ հարկային համակարգ անհատ ձեռնարկատեր (ԱՁ) չհանդիսացող ֆիզիկական անձի համար

1.1 Ընդհանուր նկարագիր

Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) չհանդիսացող ֆիզիկական անձ միկրոձեռնարկատեր կարող է համարվել այն ֆիզիկական անձը, ով բնակչության պատվերով ինքնուրույնաբար իրականացնում է ստորև բերված աղյուսակի գործունեության տեսակներից որևէ մեկը՝ առանց օգտագործելու կողմնակի անձանց աշխատուժը:

	Գործունեության տեսակները
1.	Բնակչության պատվերով կատարվող՝
1.1	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում
1.2	հագուստի արտադրություն և նորոգում
1.3	գլխարկների արտադրություն և նորոգում
1.4	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում
1.5	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում
1.6	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում
1.7	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, վրացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում
1.8	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում
1.9	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
1.10	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն
1.11	թիթեղագործական գործունեություն
2.	Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում
3.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ
4.	Լեզուների ուսուցման դասընթացներ
5.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ
6.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
7.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն
8.	Ստեղծագործական գործունեություն
9.	Խնջույքավարների գործունեություն

10.	Կրթական գործունեություն և արտադարձական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում
11.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար
12.	Դարբնոցային գործունեություն
13.	Չբուսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում

Ուշադրություն. Եթե անհատ ձեռնարկատեր (ԱՁ) չհանդիսացող ֆիզիկական անձ միկրոձեռնարկատեր էք և իրականացնում էք աղյուսակի գործունեության տեսակներից որևէ մեկը, ապա **պարտադիր չէ** գրանցվել որպես ԱՁ և ձեռք բերել ՀԴՄ սարք: Կարող էք Ձեր գործունեությունը ծավալել որպես ֆիզիկական անձ:

Կարևոր. Որպես ԱՁ չհանդիսացող ֆիզիկական անձ միկրոձեռնարկատեր դուք չեք կարող համագործակցել կազմակերպությունների հետ, աշխատանքները կարող էք իրականացնել բացառապես բնակչության պատվերով:

1.2 Հարկային պարտավորություններ

Հարկագատումը կիրառվում է այն ԱՁ չհանդիսացող ֆիզիկական անձ միկրոձեռնարկատերերի նկատմամբ՝

1. որոնք իրականացնում են վերոնշյալ գործունեության տեսակներից որևէ մեկը;
2. որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով ապրանքների կամ ծառայությունների իրացումից հասույթը չի գերազանցել 24 մլն դրամը;
3. որոնք իրենց գործունեության իրականացման համար չեն օգտագործում այլ ֆիզիկական անձանց աշխատանքը;
4. որոնք համատեղ գործունեության պայմանագրի կողմ չեն¹;

¹ Օրինակ, ենթադրենք Վազգենը Արմինեի հետ կնքել է համատեղ գործունեության պայմանագիր, ըստ որի Վազգենը զբաղվում է թեյի արտադրությամբ, իսկ Արմինեն զբաղվում է թեյի փաթեթավորմամբ, բրենդինգով և վաճառքով: Այս պարագայում Արմինեն և Վազգենը չեն կարող համարվել ինքնազբաղված միկրոբիզնեսներ և ազատվել բոլոր տեսակի բիզնես հարկերից: Սակայն եթե Վազգենը գրանցվի, որպես ԱՁ և Արմինեին վարձի, որպես աշխատող, ապա հնարավոր կլինի միկրոձեռնարկատիրության հարկային ռեժիմի ներքո ազատվել բոլոր տեսակի բիզնես հարկերից:

5. որոնք (միայն ԱԶ գրանցված լինելու դեպքում) չունեն այլ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունում 20% և ավելի փայաբաժին (բաժնետոմս, բաժնեմաս)²

Այսպիսով, եթե Դուք վերոնշյալ գործունեության տեսակներն իրականացնող և սահմանված 5 պայմաններին բավարարող անձ եք, սպա կարող եք համարվել ինքնազբաղված միկրոբիզնես և ազատվել այդ գործունեության տեսակների մասով ՀՀ բյուջե վճարման ենթակա բոլոր պետական հարկերից: Հաշվի առեք, որ եթե ՀՀ տարածք ապրանքներ եք ներմուծում, դրանց գծով սահմանին պետք է կատարեք մաքսային, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի վճարները:

	Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	Շահութահարկ	Եկամտային հարկ
ԱԶ չհանդիսացող ֆիզիկական անձ	Ազատված է		
ԱԶ			

	Սոցիալական/կուտակային վճար	Դրոշմանիշային վճար/բանակ
ԱԶ չհանդիսացող ֆիզիկական անձ	Զի վճարում	
ԱԶ		

1.3 Տվյալ հարկային ռեժիմի տակ աշխատելու համար դիմումի ներկայացման կարգ

Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի ներքո աշխատելու համար անհրաժեշտ է <https://file-online.taxservice.am> էլեկտրոնային համակարգի միջոցով լրացնել

² Ենթադրենք դուք գրանցել եք Կարեն Վարդանյան ԱԶ, միևնույն պահին Ձեր ընկերների հետ բացել եք Կաթիլ ՍՊԸ, որտեղ ունեք ընկերության 30%: Այս պարագայում Կարեն Վարդանյան ԱԶ-ն չի կարող դիմել միկրոձեռնարկատիրության հարկային ռեժիմի ներքո աշխատելու համար: Կարևոր է նշել, որ եթե Կաթիլ ՍՊԸ-ն հարկային մարմին ներկայացնի գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն, ապա Կարեն Վարդանյան ԱԶ-ն կարող է դիմել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի ներքո աշխատելու համար հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից:

և հանձնել Ձեր «Անձնական Էջ» բաժնի «Հաշվետվություններ» ենթաբաժնի «258. ԱՁ չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ» հայտարարությունը: Վերջինս հարկավոր է անել [գրանցումից հետո 20 օրվա ընթացքում](#): Եթե գրանցումից անցել է ավելին քան 20 օր, ապա տվյալ տարվա համար չեք կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ: Հայտարարությունը ներկայացնել պետք է նաև յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից փետրվարի 20-ը ընկած ժամանակահատվածում անկախ նախկինում այդ համակարգում հաշվառված լինելու փաստից:

[1.4 Հարկային հաշվետվությունների ներկայացման և հարկային պարտավորությունների կատարման ժամկետներ](#)

Հարկերից ազատման արտոնագիր ստացած ինքնազբաղված միկրոբիզնեսը գործունեության տեսակների մասով հարկային մարմիններ օրենքով սահմանված հաշվետվություններ չեն ներկայացնում: